

Պետութիւն-ժողովուրդ Միասնութիւն

(Սուրէն Յարութիւնեանի Ճառից Առթիւ)

Երկրի մը առաջնորդը այնքան մը միայն իրաւունքը ունի կոչուելու իր հայրենիքին ղեկավարը, որքան որ ան կ'իրացնէ իր ժողովուրդին հարազատ եւ արդարագոյն ձգտումները, եւ հոգեւին կը լծուի անոնց իրականացումին, իսկ քաղաքական ղեկավարի մը արժանիքը, անկախ իրմէ պահանջուած քաղաքագիտական հմտութենէն ու դիւանագիտական եւ վարչական տաղանդէն, համարժէք է այն անձնուրաց գործունէութեանը, զոր ան ի սպաս կը դնէ իր ժողովուրդին յառաջդիմութեան եւ անոր ընկերային-ազգային իրաւունքներու պաշտպանութեան մէջ: Այս տարրական իրողութիւնը ինքնաբերաբար մտաբերեցինք, երբ կարդացինք Հայաստանի Համայնավար կուսակցութեան Ա. Բարտուղար Սուրէն Յարութիւնեանի հիանալի ճառը, արտասանուած Մոսկուայի մէջ գումարուող Ոորհրդային Միութեան ժողովուրդական ղեկուսատններու Համագումարի մէկ նիստին:

Վերջին ամիսներուն, մասնաւորաբար Ղարաբաղի կոմիտէի անդամներուն բանտարկութենէն ետք, Սուրէն Յարութիւնեան իր անձին եւ գործին մասին անվստահութիւն յառաջացուցած էր Հայաստանի ժողովուրդին լայն զանգուածներուն մօտ, ու տակաւ սկսած էր դառնալ անժողովուրդական դէմք մը, որմէ կ'ուզէր բաժնուիլ ժողովուրդը: Հասկնալի է, որ Ս. Միութեան իրաւակարգային պայմաններուն պարտադրանքով, հանրապետութեան մը կուսակցապետը գործադրողն է զինք իր պաշտօնին նշանակած մարմիններուն, որոնց նաեւ ուղղակի հաշուետու է: Այս մէկ ուղղութեամբ ծառայութիւնը տասնամեակներու ընթացքին դարձաւ խորհրդային բազմացեղ եւ բազմազգ միութեան առօրեան վարող դրութիւն մը, որ միշտ չէ որ նկատի կ'առնէր ժողովուրդին բարիքը, անոր արդար կարծիքները եւ օրինաւոր պահանջները, որոնց իրագործումին համար իբր թէ պաշտօնի կոչուած էին երկրին եւ հանրապետութիւններուն մեծ ու փոքր իշխանաւորները: Սակայն նոյնիսկ այս ամբողջատիրական դրութեան մէջ, հանրապետութեան ղեկավար մը, եթէ ան իսկապէս ազգասէր եւ ժողովուրդանուէր ոգիի տէր անձ մըն էր, միջոցները կը փնտռէր եւ կը գտնէր ժողովուրդին ցաւը թեթեւցնելու եւ անոր ազգային նուազագոյն իրաւունքները լռելեայն կամ բարձրաձայն պաշտպանելու: Ոորհրդային Հայաստանի պարագային, օր մը պատմութիւնը իր անաչառ դատաստանով պիտի վճռէ, թէ շուրջ եթեանասուն տարիներու երկար շրջանին Հայաստանի ո՞ր ղեկավարը իրապէս փորձեց իրեն յանձնուած իշխանութիւնը ծառայեցնել, նոյնիսկ իր դիրքը վտանգելու գնով, հայ ժողովուրդին ազգային-ընկերային-հասարակական շահերուն պաշտպանութեան, եւ ո՞վ՝ ընդհակառակը՝ դարձաւ չարիք զինք ծնող ժողովուրդին:

Այժմ որոշապէս տարբեր են Ս. Միութեան մէջ տիրող պայմանները, շնորհիւ Միխայիլ Կորպաչովի նախաձեռնութեամբ ծնունդ առած հրապարակայնութեան եւ վերակառուցումին: Ազատութեան շունչը, որ կը փչէ Պալթեան երկիրներէն մինչեւ Կովկաս, ոչ միայն իրենց թմբիրէն կ'արթնցնէ ժողովուրդները, որոնք տէր կը կանգնին իրենց անտեսուած եւ ոտնակոխուած այլազան իրաւունքներուն, այլ նպաստաւոր գետին կը ստեղծէ կերտելու հանրապետութիւններու նոր ոգիով, նոր պարտաւորութիւններով եւ սահմանումներով ղեկավարներ: Այլ խօսքով, եթէ ժողովուրդները իրաւունքը ունին իրենց ձայնը բարձրացնելու, անոնց ղեկավարներուն առաջին պարտաւորութիւնն է հարազատ ներկայացուցիչը ըլլալ իրենց ժողովուրդին, որուն ծառայելու համար ընտրուած են անոնք եւ որոնց նաեւ, ի վերջոյ, հաշուետու են:

Ահա, այս սկզբունքէն մեկնելով է որ, իր նոր առաքելութեան գիտակից Հայաստանի թիւ մէկ ղեկավարը, Մոսկուայի բարձրագոյն բեմէն իր ճառը կը սկսի սա պարզ եւ նշանակալից բառերով. «Ես կը ցանկայի անդրադառնալ ազգային զարգացման եւ ազգամիջեան յարաբերութիւններու պրոբլեմներին, որովհետեւ այժմ հենց դրանք են գտնուած հանրապետութեան (Հայաստանի) հասարակական - քաղաքական կեանքի էպիկեդրոնում: Հենց դրանց մասին եմ ինձ յանձնարարելու Համագումարում ասել ինձ այստեղ ուղարկած ընտրողները» (Ստորագծումները մեզմէ, Ս.):

Եւ ի՞նչ կ'ըսեն այդ ընտրողները, ամբողջ Հայաստանի ժողովուրդը:

Այդ ժողովուրդը, հայ ժողովուրդը կ'ըսէ, որ տասնամեակներու ընթացքին կուտակուած են ընկերային - տնտեսական հարցեր, որոնց բաւարարութիւն չեն գտներ, եւ որոնց լուծման համար սահմանափակ հնարաւորութիւններ կան, որ ժողովուրդին պատմական յիշողութեան մէջ է անամոք ցաւը: Ահա մէկ ու կէս տարի է, որ Հայաստան աշխարհը ցնցուած է Արցախի հարցով: Տասնամեակներ շարունակ կրկնուած Լեւինեան խօսքը՝ թէ բոլոր ժողովուրդները Ս. Միութեան մէջ հաւասար են՝ ճշմարտութեան չի համապատասխաներ: Արցախի հարցով կը խօսուի բարեկամութեան եւ եղբայրութեան մասին, իսկ միւս կողմէ աշխատանք կը տարուի պատմութիւնը նենգափոխելու: Սուտապատումներ են Ալիեւի յայտարարութիւնները. տասնամեակներ շարունակ հայ ժողովուրդին արժանապատուութիւնը եւ իրաւունքները ոտնահարուած են: Նոյնիսկ այսօր Հայաստանէն ղեկավար մը, գիտնական մը կամ գրող մը՝ չի կրնար Արցախ երթալ առանց որ ան քաղաքական հարցի վերածուի: Տարիներով «դասակարգային համերաշխութիւն բարձրացուցած ենք» սակայն անիկա ծառայած է միայն ժողովուրդը թմբեցնելու: Նոյնիսկ Արցախի Կառավարման Յատուկ Ցանձնախումբը ձախողեցաւ իր

առաքելութեան մէջ, չկրցաւ դառնալ անկախ, իսկ միւս կողմէ անտեսեց ժողովուրդին եւ տեղական կուսակցական մարմինները: Պարոնայք ղեկուսատններ, ինչպէ՞ս կարելի է Ստալինի շրջանի անմեղ գոհերը այսօր վերականգնել, եւ սակայն նոյն բանը չընել ժողովուրդներու նկատմամբ (ծափահարութիւններ), այլապէս ընդունած պիտի ըլլանք Ստալինի անարդար որոշումներուն անձեռնմխելիութիւնը: Վերջապէս Արցախի ճակատագիրը պէտք է յանձնել իր ժողովուրդին, եւ լաւագոյն լուծումը պիտի ըլլար հանրաքուէի մը կայացումը:

Վերադառնալով Հայաստանի, Սուրէն Յարութիւնեան կ'առաջարկէ տնտեսական ազատ գոտիի մը ստեղծումը, Հայաստանին տնտեսական գերիշխանութիւնը եւ մասնաւոր կապեր այն երկիրներուն հետ, ուր կը գտնուին «մեր երկրի ու ազգութիւններին հետ էթնիկապէս կապուած համայնքներ»: Այլ խօսքով, Հայաստան պէտք է իրաւունք ունենայ յատուկ յարաբերութիւններ մշակելու Սփիւռքի հայաշատ կեդրոններուն հետ, քանի նաեւ՝ «մեզ պատրաստ է էական օգնութիւն ցոյց տալ սփիւռքահայութիւնը՝ մեր ժողովուրդի անբաժանելի մասը»:

Հայաստանի Ա. Բարտուղարը վերջապէս կ'արժարժէ Հայկ. ցեղասպանութիւնը, զոր վերջերս, Երեւան ոչ միայն դատապարտեց, այլ որոշեց նաեւ դիմել Մոսկուա, Գերագոյն Ոորհուրդի նախագահութեան, որպէսզի նման դատապարտում մը եւս հոն որոշուի, քանի «ցեղասպանութիւնը, որպէս մարդկութեան դէմ ուղղուած հրէշաւոր յանցագործութիւն, չի կարող մնալ առանց դատապարտման» (Ծափահարութիւններ):

Ու դեռ կայ Սումկայիթը, որ անհրաժեշտ դատապարտումի չարժանացաւ, Ատրպէյճանի 200,000 գաղթականները, որոնց վրայ պէտք է բարդել երկրաշարժէն 530,000 անօթեւան աղիտեալները, առանց մոռնալու «զանգուածային թունաւորումներ» ու պարագան, որոնց հեղինակներուն բացայայտման համար «իրաւապահ մարմինները, միութեանական եւ հանրապետական յանձնաժողովները» կը ցուցաբերեն «անզօրութիւն եւ, դանդաղկոտութիւն»: Պարզ խօսքով, Հայաստանի գործարաններուն մէջ մարդիկ կը շարունակեն թունաւորուիլ օտար ոճրագործներու կողմէ, ու հակառակ ասոր՝ եղեռնագործները կը շարունակեն իրենց ոճիրները, առանց անհանգիստ ըլլալու «իրաւապահ մարմիններէն»:

Յարութիւնեանի ոճր եւ ճշմարտութիւնը ըսելու ձեւը կը տարբերի մինչեւ հիմա մեզի ծանօթ խորհրդային «Լեքսիք» ոյէն: Մատնանշումները կ'ըլլան յստակ, դիպուկ, ուղղակի: Ան, առանց դարձարձիկ նախադասութիւններու կ'ըսէ, օրինակ, որ «հայ եւ ատրպէյճանական ժողովուրդներու լուրջ առեակատումը իրականութեամբ տխուր փաստ է», ու երբեք պէտք չէ չփոթել «հետեւաճճը պատճառի հետ», պէտք է ըմբռնուի, ի վերջոյ, որ Հայաստանի մէջ «Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը դարձել է համազգային գաղափար, որն այնքան խորն է թափանցել մարդկանց սրտերը, որ անգամ անմախաղէպ տարբերային աղէտը մոռանալ չտուեց իրեն»: Հասկցողին՝ շատ բարեւ:

Որպէս դարման, Սուրէն Յարութիւնեան կ'առաջարկէ Ոորհրդային Սահմանադրութեան բարեփոխութիւնը, քանի ան «անկատար» է, ծառայելու համար Որհրդային Պետութեան ամրապնդման՝ որպէս «իրապէս գերիշխան հանրապետութիւններու դաշնակցութիւն»:

Քաղաքական աշխատանքի իսկական եւ առողջ քաղաքագիր մըն է Յարութիւնեանի ճառը, զոր կրնայ իւրացնել ամէն գաղափարի եւ տեսակէտի հայ: Համամարդկային եւ համահայկական ծրագիր մը՝ որուն մաս կը կազմէ նաեւ սփիւռքը, հայ ժողովուրդին այդ «անբաժանելի մասը», որ անցեալ Փետրուարէն ի վեր քանդած է արտաքին եւ ներքին պատնէշները, ինչպէս պատմական եւ տեսական արգելքները, միաձոյլ կերպով դիմագրաւելու համար իր գոյութեան եւ լինելութեան դէմ կանգնող բոլոր արգելքները եւ վտանգները:

Կը յուսանք, որ Հայաստանի ղեկավարին ճառին ոգիին եւ տառին պիտի ներդաշնակուին Երեւանի իշխանութիւններուն ազգային, ընկերային, տնտեսական եւ հասարակական բոլոր գործունէութիւնները եւ ծրագրումները: Նման երաշխիք մը պիտի ծառայէ ամրապնդելու իշխանութիւններուն խախտած վարկը, որուն անհրաժեշտ զօրացումին կարիք ունինք, եւ որ կրնայ միայն շահ բերել մեր աղիտեալ հայրենիքին:

BAIKAR ARMENIAN WEEKLY
 ISSN 0741-8396
 An A.D.L. Publication
ՊԱՅՔԱՐ ԵՆԱԹԱԹԵՐԹ
 Պաշտօնաթերթ Ռամկավար Ազատական Կուսակցութեան
 Ամերիկայի Արեւելեան Երջանակի
 Published weekly except two weeks in July by:
Baikar Association, Inc.
 468 Mount Auburn Street, P.O.Box 302, Watertown, MA 02172
 Telephone: (617) 924-4420
 Telex (TLXI): 928436 (BAIKAR/MIRROR) • FAX (617) 924-3860
 Editor: KRIKOR KEUSSEYAN
 Subscription Rate: \$50 per year
 Advertising: \$5.00 per column inch
 Second Class Postage paid at Boston, MA
POSTMASTER: Send address changes to Baikar Armenian Weekly,
 P.O.Box 302, Watertown, MA 02172